ու հեռացրին Օսմանլիներին և Ղրիմի թաթարներին Դաղստան և Դերբենդ, իսկ Սելման խանը, որը նշանակուած էր Շիրվանի բեկլար բեյ պաշարեց Բագուն, որ երկրորդ անգամ ամրացրուած էր Օսման փաշայի ձեռքով։

18 օր շարունակուեց պաշարումը, բայց ուտելիքի պակասութիւնը որ յառաջացել էր Շիրվանի աւերումներից, ստիպեց պարսիկներին յետ քաշուել առանց որևէ յաջողութեան։

Ուժասպառ Պարսկաստանը առաջարկում էր Ռուսաստանին 1589 թուին վերցնել ընդ միշտ իւր իրաւասութեան ներքոյ Բագուն, Դերբենդը և ազատել Թուրքերի ձեռքից, բայց այդ առաջարկը չընդունուեցաւ։

Երբ Շիրվանը նուաճեց Շահ Աբբաս I, Բագուայ Շիխ ազգաբնակութիւնը, որը միշտ բարեկամ էր պարսկաց իբրեւ նոյնակրօն պետութեան, տաճիկների դէմ դաւադրութիւն կազմեցին, երբ Աբասը պաշարում էր Շամախին։ Այդ դաւադրութիւնը յայտնի եղաւ տաճիկներին, բայց դաւաճանները բացարձակ յարձակուեցին տաճիկների աննշան գնդի վրայ, սպանեցին նոցա և գլուխները ուղարկեցին շահին։ Աբասը ապստամբներին շնորհեց սպանուածների բոլոր կալքը և Բագուում նշանակեց կոմենդանտ։ Քաղաքը կրկին անցաւ պարսից տիրապետութեան ներքոյ և զգալի կերպով վերանորոգուած էր Շահ Աբբաս II Սաֆի ձեռամբ։

1683 թուին Կեմպֆերը այցելեց Բագուն։

Պարսկաստանում տեղի ունեցող խռովութիւնների ժամանակ Բագուայ բնակիչները մտան Պետրոս Մեծի հովանաւորութեան ներքոյ, երբ նա հասել էր Դաղստան (Դերբենտ), բայց յետոյ հրաժարուեցին նորա հովանաւորութիւնից, որովհետեւ Բագուայ կառավարիչը գաղտնի յարաբերութիւն ունէր խռովարար Դաւուդ բէկի հետ։ 1723 թուին գեներալ Մայեօր Մատիւշկինը զօրքով ուղարկուած էր Բագու (ծովի վրայով)։ Զորս օրուայ ռմբակոծութիւնից յետոյ քաղաքը անձնատուր եղաւ. կառավարիչը փոխուած էր և նորա տեղ նշանակուած նախկին գարնիզօնի ղեկավար Վերգեայ Ղուլի բէկը, որ կոչուեց Խան. բայց շուտով յայտնի եղաւ որ նա էլ դաւաճան է. ուստի հեռացրուեցաւ պաշտօնից. իսկ Բագուն 1735 թուից սկսուեց կառավարուել ռուս կոմենդանտներով։